ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 22-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 84-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փաստաթղթաշրջանառության ինդեքսները հաստատելու, փաստաթղթաշրջանառության առանձնահատկությունները կանոնակարգելու և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի հունվարի 30-ի N 19-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 84-Լ հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 88-րդ կետում «ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն» բառերը փոխարինել «ՀՀ ՆԳՆ հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոն» բառերով,

2) 93-րդ կետում «ՀՀ ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն» բառերը փոխարինել «ՀՀ ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն» բառերով,

3) 95-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«95. ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայություն (այսուհետ՝ ՓԾ) 95

ՀՀ ՆԳՆ ՓԾ քաղաքացիական և բնակչության պաշտպանության վարչություն 95/1

ՀՀ ՆԳՆ ՓԾ փրկարարական ուժերի վարչություն 95/2
ՀՀ ՆԳՆ ՓԾ հոգեբանական աջակցության և բժշկական ապահովման վարչություն 95/3
ՀՀ ՆԳՆ ՓԾ Երևան քաղաքի փրկարարական վարչություն 95/4
ՀՀ ՆԳՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչություն 95/5
ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչություն 95/6
ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչություն 95/7
ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչություն 95/8
ՀՀ ՆԳՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչություն 95/9
ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչություն 95/10
ՀՀ ՆԳՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչություն 95/11
ՀՀ ՆԳՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչություն 95/12
ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչություն 95/13
ՀՀ ՆԳՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչություն 95/14»,

4) ուժը կորցրած ճանաչել 100-րդ կետը:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՄԱՐԳՍՅԱՆ
21.03.2026թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԼԳՐՈՒԹՅԱՄԲ